

րաւորումը արժանապատուութեան համար: Հայերը դաւով մետրապոլիտը ծուղակը կը ձգեն և իբր պատիժ ողջ ողջ կ'այրեն զինքը:

Վասիլ խիտ զայրացած մեծ պատրաստութեամբ կու գայ Սամուէլը պատժել. Ֆիլիպէի մէջ պահակ կը ձգէ Լեւոն զօրավարը մեծ գունդով մը և կ'աճապարէ պուլկարաց վրայ երթալ: Յանկարծ իրեն լուր կը հասնի որ Լեւոն իր դէմ ապստամբած՝ Պոլսոյ վրայ կը քալէ: Անմիջապէս Վասիլ ետ կը դառնայ Ֆիլիպէ, ուր մեծ զարմանքով կը տեսնէ Լեւոնի հանդարտ և հաւատարմօրէն իր զիրքին վրայ սպասելը: Կը հասկնայ որ պալատական ներքին խաղի մը զոհ եղած է: Եւ դարձեալ ան կը հրամայէ իր ըստուարած իր բանակին պուլկարաց վրայ քալել... այս անգամ իրարանցումը կատարեալ կ'ըլլայ երբ յանկարծ պուլկար հեծելագունդը կը խուժէ յունական բանակին վրայ և սարսափելի շարժմբ կուտայ: Վասիլ հագիւ կ'ազատի վրայ տալով իր արքայական վրանը՝ բոլոր կազմածով: Պատմիչք, ինչպէս նաև Չամչեան կը վկայեն թէ՛ պուլկարք այս յաղթանակը կը պարտին իրենց հայ զինակիցներուն, կրթուած և ծանօթ բիզանդական բանակներուն և պատերազմին գաղտնեաց. — սրտոտ, կտրիճ և խորամանկ, որոնք կողք կողքի տարին իրենց յաղթանակը: « զօրք Սամուէլի որք էին բուղարաց և Հայոց », ինչպէս Չամչեան կը յիշէ: Վասիլի հետեւակագօրքը կը բաղկանար բոլորովին օտար վարձկան զօրքէ, մեծ մասամբ հայ գունդերէ, որոնց չըպաւ Սամուէլ, այլ գանոնք « գերի » բռնեց և խառնեց իր բանակին: Սամուէլի այս երկրորդ յաղթանակը բարձրացուց իր համբաւը: Հռոմի պսպը թագ ու ծիրանի դրկեց Սամուէլի: Մինչ ամբողջ Պուլկարիան կը ցնծար յաղթանակով 980 = 981ին Վասիլ օտարացեալ Սամուէլը ճանչնալ Չար և անոր ձգեց վիճելի հողամասերը, այսպէս նոր և սակայն աւելի հաստատուն դաշինք մը կնքեցին Սամուէլ և Վասիլ:

Վերջին համաշխարհային պատերազմի առեն գտնուեցան գերեզմանաքարեր, որոնցմէ հաստատուեցաւ որ Սամուէլ ունէր չորս գաւակ, իր հայրը կը կռուէր Գաւիթ — կամ Կիթոլա — և իր մայրը Հոիփսիմէ — գուտ հայկական անուն մը: 15 տարի տեւեց այս վերջին խաղաղութիւնը, որու ընթացքին Վասիլ գաղտնի զինուեցաւ, պատրաստուեցաւ Սամուէլի դէմ: Կոր գունդեր և նոր առաջնորդներ բերաւ իր բանակին, որոնցմէ նշանաւոր էր Սահակ Անժիւթոյ իշխանը, Գրիգոր Տարօնեցիի և որդի Աշոտ Տարօնեցիի, վերջինները հաւատարիմ յունասէրներ:

Այսպէս 15 տարի վերջ յանկարծ Վասիլ կը կտորէ խաղաղութեան դաշինքը ու մեծ պատրաստութեամբ կը քալէ պուլկարաց վրայ: Կը գրաւէ Տիւոկա քաղաքը և իբր պաշտպան կը ձգէ Սահակ Անժիւթոյ, Գրիգոր և Աշոտ Տարօնեցիները. և սակայն Սամուէլ կը յարձակի Տիւոկայի (Տուրացոյի) վրայ ու կը պաշարէ քաղաքը: Խիզախն Աշոտ կը յարձակի փախուստ կեղծող Սամուէլի մարդոց վրայ: Իր հայրը

զգալով ազէտ մը կը հետեւի իր քաջ՝ սակայն անխոհեմ որդւոյն: Յանկարծ դարանակալ պուլկար և հայ զօրքերը կը նետուին Աշոտի վրայ: Գրիգոր Տարօնեցի պատերազմի դաշտին վրայ կը սպաննուի, իսկ Աշոտ գերի կը տարուի: Սահակ Անժիւթոյ իշխանը արդէն իր զօրքով կը յանձնուի Սամուէլի որ կը գրաւէ Տիւոկան: Աշոտ՝ կամակոր և ըմբոստ՝ կը բանտարկուի: Այդ միջոցին Սամուէլի աղջիկը կը տեսնէ զԱշոտ, կը սիրահարուի անոր և թախանձանքներով հուսկ յետոյ կը համոզէ հայրը որ գայն իրեն փեսայացնէ: Սամուէլ կը կատարէ իր աղջկան ինզրանքը զժկամակելով և Աշոտը փեսայացնելէ յետոյ գայն կը կարգէ Տիւոկա քաղաքին զինուորական պահակ: Քաղաքը ունէր բերդ և նաւահանգիստ: Եւ սակայն Աշոտ քաղաքին յունասէր կառավարիչին հետ միախորհնորդ քաղաքը կը մտանէ Վասիլի: Աշոտ առաջին առթիւ իսկ Սամուէլի աղջկան կամ աւելի լաւ իր կնոջ հետ միասին կը փախչի Պոլիս: Վասիլ ուրախացած այս անակնկալէն՝ Աշոտը կ'ընէ « մագիստրոս », և իր զործակալ Էւստաթիոս Թաֆնոմիլէ պատրիկը կը զրկէ զբրաւելու քաղաքը: Սամուէլ յանկարծակիի կու գայ այս անակնկալէն: 1014ին պուլկարները պարտուած լեւները քաշուեցան: Սամուէլ Պուլկարիոյ անառիկ ամրոցներէն մին ապստանեցաւ, մինչ Վասիլ ազատ համարձակ յարձակեցաւ պուլկար բանակին ցրուած մնացորդներուն վրայ, մէկիկ մէկիկ գրաւեց անոնց ամրութիւնները և վերջապէս պաշարեց Չար Սամուէլը իր ամրոցին մէջ, և սակայն Սամուէլ ճեղքեց Վասիլի պաշարումը և քաշուեցաւ երկրին ալ աւելի ներսերը, ամուր բերդի մը մէջ: Վասիլ Բ. զգաց թէ անկարելի պիտի ըլլայ բռնել զՍամուէլ, ուստի վրէժի ուրիշ միջոց մը խորհեցաւ. իր գերի բռնած 10 — 15000 պուլկար և հայ գունդներուն վրայ թափելով իր կատարութեան ամբողջ մոլուցքը. գերիներու այս բանակին իւրաքանչիւր զինուորը ան կուրացուց և իւրաքանչիւր 100ին մէկ միականի ձգեց իբր առաջնորդ զժբախտներու այդ կարասանին: Ու այսպէս թափօրը ցաւազին, թափօրը այդ արեւազուրկ կտրիճներուն զժբախտութեան պէս սողոսկեցաւ Պուլկարիոյ ներսերը, սուգ ու շուան մոցնելով ամէն օճախի մէջ: Անոնց խարխափող շարաններուն ի տես շանթահար ինկաւ Սամուէլ՝ բերանը փրփրոտ, հանալով և ցաւազին տալը լսկելով: Շուարած պալատականք ի գուր օգնութեան վազեցին իրենց Չարին: Դեղն ու դարմանը օգուտ չըրին այդ տարաբախտ Հայ որդւոյն ցախի. երեք օրուան մէջ ան մեռաւ, անհուն սուգի մասնելով բոլոր անոնք որ զինքը ճանչցած ու սիրած էին: Ան ոչ իսկ բառ մը կրցաւ արտասանել ետօրեայ հիւանդութեան ընթացքին: Այսպէս 1014 Մեպտ. 15ին մեռաւ ան սուգով և վրէժով լեցնելով բոլոր Պուլկար, Աւար և Հայ ցեղերը:

Վասիլի այս արիւնոտ գործը պատմութեան մէջ արձանագրուեցաւ, և իրեն շահիլ տուաւ պոչկարատեւաց տիտղոսը: Իրեն՝ հայ ծագ.